

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 թվականի մարտի  
6-ի թիվ 206/2012 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

**«Օդորակիչների եւ կենցաղային օդափոխիչների էկոնախագծման  
պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ  
2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող  
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,  
հաշվի առնելով «Էներգասպառող արտադրատեսակին ներկայացվող  
էկոնախագծման պահանջներ մշակելու համար շրջանակ սահմանելու մասին»  
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի  
2009/125/ԵՀ հրահանգը<sup>1</sup> եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից  
հետո,

քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն՝ էկոնախագծմանը ներկայացվող  
պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգասպառող  
այն արտադրատեսակների նկատմամբ, որոնք ունեն իրացման եւ  
ապրանքաշրջանառության էական ծավալներ, նշանակալից ազդեցություն են  
գործում շրջակա միջավայրի վրա եւ մեծ հնարավորություն ունեն  
նախագծման միջոցով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու  
առումով՝ չհանգեցնելով չափազանց մեծ ծախսերի.

<sup>1</sup>ՊՏ L 285, 31.10.2009, էջ 10:

- 2) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի «ա» կետով նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի եւ 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչների համաձայն, ինչպես նաեւ Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում ներմուծում է ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետ կրճատման մեծ ներուժ ունեցող՝ կիրարկումն ապահովող միջոցառումներ, օրինակ՝ ջեռուցման, օդափոխման եւ օդորակման համակարգերում օգտագործվող արտադրատեսակների համար.
- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն՝ տնային տնտեսություններում եւ փոքր առետրային ձեռնարկություններում սովորաբար օգտագործվող օդորակիչների եւ կենցաղային օդափոխիչների տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերը վերլուծելու համար: Ուսումնասիրությունը մշակվել է ԵՄ եւ երրորդ երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, իսկ արդյունքները հասանելի են դարձվել հանրության համար.
- 4) Ակտիվ շահագործման փուլում էներգասպառումը եւ ձայնի հզորության մակարդակն ընդգրկված արտադրատեսակների բնապահպանական այն հիմնական հայեցակետերն են, որոնք կարելի է սույն կանոնակարգի նպատակներով: Նախապատրաստական ուսումնասիրությունը նաեւ որպես էական բնապահպանական հայեցակետ է սահմանել սառնազդակի հնարավոր արտահոսքը ջերմոցային գազերի այն ուղղակի արտանետումների տեսքով, որոնք կազմում են ջերմոցային գազերի արտանետումների համակցված ուղղակի եւ անուղղակի արտանետումների միջինում 10-20 տոկոսը.
- 5) ինչպես ներկայացվել է նախապատրաստական ուսումնասիրության մեջ եւ հաստատվել ազդեցության գնահատման մեջ, կենցաղային օդափոխիչների

արդյունավետության մասով առկա է տեղեկությունների պակաս: Այնուամենայնիվ, շուկայի վերահսկողությամբ զբաղվող մարմիններին կարելու է տեղեկություններ տրամադրելու եւ ապագայում էներգաարդյունավետության նվազագույն պահանջներ սահմանելու նպատակով շուկայի արդյունավետ դիտանցման հնարավորություն ստեղծելու համար կենցաղային օդափոխիչների վերաբերյալ արտադրանքի տեխնիկական բնութագրին ներկայացվող պահանջները կապահովեն, որ սարքի արդյունավետությունը եւ օգտագործվող չափման մեթոդը նկատելի լինեն արտադրանքի վրա: Ավելին, կենցաղային օդափոխիչների համար սահմանված են «սպասման» եւ «անջատված» ռեժիմներ:

- 6) սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակների էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը 2005 թվականին գնահատվել է 30 ՏՎտ/ժ: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, ապա 2020 թվականին էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը, ըստ կանխատեսումների, կկազմի 74 ՏՎտ/ժ: Նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակների էլեկտրաէներգիայի սպառումը կարող է էապես կրճատվել:
- 7) Նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էկոնախագծման՝ 2009/125/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածի 1-ին մասում նշված այլ պարամետրերի հետ կապված պահանջներն անհրաժեշտ չեն, քանի որ ակտիվ շահագործման փուլում օդորակիչների էլեկտրաէներգիայի սպառումը եւ ձայնի հզորության մակարդակն ամենաէական բնապահպանական հայեցակետերն են:
- 8) քանի որ «Որոշ ֆտորացված ջերմոցային գազերի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 842/2006 կանոնակարգում (ԵՀ)<sup>1</sup> անդրադարձ է կատարվում սառնազդակներին, սույն կանոնակարգով սառնազդակների մասով որեւէ կոնկրետ պահանջ չի

<sup>1</sup> ՊՏ L 161, 29.12.2006թ., էջ 1:

սահմանվում: Այնուամենայնիվ, էկոնախագծմանը ներկայացվող պահանջներով առաջարկվում է պարզեատրում՝ շուկայում շրջակա միջավայրի վրա նվազեցված վնասակար ազդեցությամբ սառնազդակների օգտագործումը խթանելու նպատակով: Պարզեատրումը կհանգեցնի էներգաարդյունավետության ավելի ցածր նվազագույն պահանջների այն սարքվածքների համար, որոնք օգտագործում են գլոբալ տաքացման ներուժ (ԳՏՆ) ունեցող սառնազդակներ:

- 9) Օդորակիչները կարող են շենքերում տեղադրված համակարգերի մաս կազմել: Ի թիվս այլնի, «Շենքերի էներգաարդյունավետության մասին»<sup>1</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/31/ԵՄ հրահանգի վրա հիմնված ազգային օրենսդրությամբ կարող են սահմանվել նոր, ավելի խիստ պահանջներ այն օդորակիչ համակարգերի նկատմամբ, որոնք օդորակչի արդյունավետության մասով օգտագործում են սույն կանոնակարգով սահմանված հաշվարկման եւ չափման մեթոդները:
- 10) «Սպասման» եւ «անջատված» ռեժիմների ֆունկցիաները կարող են պատասխանատու լինել այս սարքվածքների ընդհանուր էներգասպառման զգալի մասի համար: Օդորակիչների համար, բացառությամբ երկխողովակ եւ միախողովակ օդորակիչների, այս ֆունկցիաների էներգասպառումը նվազագույն էներգաարդյունավետության նկատմամբ պահանջների եւ սեզոնային արդյունավետության չափման մեթոդի մասն է կազմում: Երկխողովակ եւ միախողովակ օդորակիչների համար սպասման եւ անջատված ռեժիմների նկատմամբ պահանջները սահմանված են Հանձնաժողովի թիվ 1275/2008 կանոնակարգի (ԵՀ) էկոնախագծմանը ներկայացվող պահանջների հիման վրա<sup>2</sup>:
- 11) Ակնկալվում է, որ սույն կանոնակարգով եւ «Օդորակիչների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի

<sup>1</sup> ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 13:

<sup>2</sup> ՊՏ L 339, 18.12.2008թ., էջ 45:

2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 4-ի թիվ 626/2011 պատվիրակված կանոնակարգով սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համակցված ազդեցությունը՝ մինչև 2020 թվականը կհանգեցնի տարեկան 11 ՏՎտ էլեկտրախնայողության՝ ի համեմատություն միջոցների չկիրառման դեպքում տիրող իրավիճակի.

- 12) սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակները պետք է դարձվեն ավելի էներգաարդյունավետ՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված եւ ծախսարդյունավետ տեխնոլոգիաները, որոնք կարող են նվազեցնել այդ արտադրատեսակների գնման եւ շահագործման հետ կապված ընդհանուր ծախսերը.
- 13) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները չպետք է ազդեցություն ունենան ֆունկցիոնալ հնարավորությունների վրա վերջնական սպառողի տեսանկյունից, ինչպես նաեւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, ակտիվ շահագործման փուլում էներգասպառումը նվազեցնելու օգուտները պետք է էապես գերազանցեն արտադրության փուլում շրջակա միջավայրի վրա ցանկացած լրացուցիչ ազդեցությունը.
- 14) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է ներդրվեն աստիճանաբար՝ արտադրողներին սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակները վերանախագծելու համար բավարար ժամանակ տրամադրելու նպատակով: Ժամկետը պետք է այնպես սահմանվի, որ հնարավոր լինի խուսափել շուկայում առկա սարքավորումների ֆունկցիոնալ հնարավորությունների վրա բացասական ազդեցություններից եւ հաշվի առնվեն վերջնական սպառողների եւ արտադրողների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների վրա ծախսերի հետեւանքները՝ ապահովելով սույն կանոնակարգի նպատակների ժամանակին իրականացումը.

<sup>1</sup> ՊՏԼ 178, 6.7.2011թ., էջ 1:

- 15) արտադրանքի համապատասխան պարամետրերի չափումները կատարվում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման մեթոդների միջոցով, որոնք հիմնվում են չափման՝ համընդհանուր ճանաչում ունեցող արդիական մեթոդների վրա, իսկ հնարավորության դեպքում՝ ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, ինչպես թվարկված է Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի ոլորտում տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող 98/34/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 1998 թվականի հուլիսի 20-ի 98/48/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածում<sup>1</sup>.
- 16) 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածին համապատասխան՝ սույն կանոնակարգով սահմանվում են համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգեր.
- 17) համապատասխանության ստուգումները հեշտացնելու համար արտադրողները տեխնիկական փաստաթղթերում պետք է տրամադրեն թիվ 2009/125/ԵՀ հրահանգի IV եւ IV հավելվածներում նշված տեղեկություններն այնքանով, որքանով այդ տեղեկություններն առնչվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.
- 18) ի հավելումն սույն կանոնակարգով սահմանված պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջների՝ պետք է սահմանվեն կողմնորոշիչ հենանիշեր՝ գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների համար՝ սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակների շահագործման ժամկետի ընթացքում դրանց էկոլոգիական ցուցանիշների մասով տեղեկությունների լայն հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով.

<sup>1</sup> ՊՏ L 217, 5.8.1998թ., էջ 18:

- 19) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը**

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ՝ էլեկտրական ցանցից սնվող,  $\leq 12$  կՎտ հովացման կամ ջեռուցման, (եթե արտադրանքը չունի հովացման ֆունկցիա) անվանական հզորությամբ եւ  $\leq 125$  Վտ մուտքային էլեկտրական հզորություն ունեցող հովհարիչներով կենցաղային օդափոխիչների շուկայահանման համար.
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
  - ա) ոչ էլեկտրական էներգիայի աղբյուրներ օգտագործող սարքվածքներ.
  - բ) օդորակիչներ, որոնց կոնդենսատորի հատվածը կամ գոլորշիի հատվածը կամ երկուսն էլ չեն օգտագործում օդը որպես ջերմության փոխանցման միջավայր:

### *Հոդված 2*

#### **Սահմանումները**

Սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի սահմանումները:

Ի լրումն, կիրառվում են նաեւ հետեւյալ սահմանումները՝

1. «օդորակիչ» նշանակում է սարք, որն ունակ է ներսի օդը հովացնել կամ տաքացնել կամ երկուսն էլ՝ էլեկտրական կոմպրեսորի միջոցով աշխատող՝ գոլորշու խտացման ցիկլի կիրառմամբ, այդ թվում այն օդորակիչները, որոնք ունեն այնպիսի լրացուցիչ ֆունկցիոնալ հնարավորություններ, ինչպիսիք են խոնավազերծումը, օդի մաքրումը, օդափոխությունը կամ օդի լրացուցիչ տաքացումը՝ էլեկտրական դիմադրության հաշվին ջեռուցման, ինչպես նաև այնպիսի սարքվածքների միջոցով (կոնդենսացիոն ջուր, որն առաջանում է գոլորշի հատվածի վրա կամ դրսից ավելացված ջուր), որոնք կարող են օգտագործել ջուր՝ կոնդենսատորի վրա գոլորշիացման նպատակով՝ պայմանով, որ սարքը նաև կարող է աշխատել առանց լրացուցիչ ջրի օգտագործման՝ միայն օդի կիրառմամբ.
2. «երկխողովակ օդորակիչ» նշանակում է օդորակիչ, որում հովացման կամ ջեռուցման ժամանակ կոնդենսատորի (կամ գոլորշի) ներիս օդը սարք է ներմուծվում արտաքին միջավայրից՝ խողովակի միջոցով, եւ արտաքին միջավայր է արտանետվում երկրորդ խողովակի միջոցով, եւ որն ամբողջությամբ տեղադրվում է օդորակվող սենքի ներսում՝ պատի կողքին.
3. «միախողովակ օդորակիչ» նշանակում է օդորակիչ, որում հովացման կամ ջեռուցման ժամանակ կոնդենսատորի կամ գոլորշի ներիս օդը ներմուծվում է այն սենքից, որտեղ գտնվում է սարքը, եւ արտանետվում այդ սենքից դուրս.
4. «անվանական հզորություն» (*P<sub>անվանական</sub>*) նշանակում է սարքի՝ գոլորշու խտացման ցիկլի հովացման կամ ջեռուցման հզորությունը ստանդարտ անվանական պայմաններում.
5. «կենցաղային օդափոխիչ» նշանակում է անձնական հովացման հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով գլխավորապես մարդու մարմնի շուրջ կամ դրա որեւէ հատվածի վրա օդային շարժի ստեղծման համար նախատեսված սարքվածք, այդ թվում՝ կենցաղային օդափոխիչներ, որոնք ունեն այնպիսի լրացուցիչ ֆունկցիոնալ հնարավորություններ, ինչպիսին է լուսավորումը.



6. «օդափոխիչի մուտքային հզորություն» (<օ) նշանակում է կենցաղային օդափոխիչի մուտքային էլեկտրական հզորություն՝ արտահայտված Վատտով՝ օդափոխիչի սահմանված առավելագույն արագության գործարկմամբ՝ չափված ակտիվ տատանվող մեխանիզմով (երթ (երբ) անհրաժեշտ է):

Հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները ներկայացված են I հավելվածում:

### Հոդված 3

#### **Էկոնախագծման պահանջները եւ ժամանակացույցը**

1. Օդորակիչների եւ կենցաղային օդափոխիչների մասով էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանված են I հավելվածում:

2. Էկոնախագծմանը ներկայացվող յուրաքանչյուր պահանջ կիրառվում է հետեւյալ ժամանակացույցին համապատասխան՝

2013թ. հունվարի 1-ից՝

միախողովակ եւ երկխողովակ օդորակիչները պետք է համապատասխանեն I հավելվածի 2(ա) կետում նշված պահանջներին:

2013թ. հունվարի 1-ից՝

ա) օդորակիչները, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, պետք է համապատասխանեն I հավելվածի 2(բ) եւ 3(ա), 3(բ), 3(գ) կետերում նշված պահանջներին.

բ) միախողովակ եւ երկխողովակ օդորակիչները պետք է համապատասխանեն I հավելվածի 3(ա), 3(բ), 3(դ) կետերում նշված պահանջներին.

գ) կենցաղային օդափոխիչները պետք է համապատասխանեն I հավելվածի 3(ա), 3(բ), 3(ե) կետերում նշված պահանջներին:

2014թ. հունվարի 1-ից՝

ա) օդորակիչները պետք է համապատասխանեն I հավելվածի 2(գ) կետում նշված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջներին.

բ) միախողովակ եւ երկխողովակ օդորակիչները պետք է համապատասխանեն I հավելվածի 2(դ) կետում նշված պահանջներին:

3. Էկոնախագծմանը ներկայացվող պահանջներին համապատասխանությունը չափվում եւ հաշվարկվում է II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

#### *Հոդված 4*

#### **Համապատասխանության գնահատումը**

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգն այդ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների ներքին հսկողությունն է կամ այդ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:

2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերի փաթեթը պարունակում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված հաշվարկման արդյունքները:

#### *Հոդված 5*

#### **Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը**

Սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանության համար անդամ պետությունները 2009/125/ԵՀ

հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության ստուգումներն իրականացնելիս կիրառում են սույն կանոնակարգի III հավելվածում նկարագրված ստուգման ընթացակարգը:

#### *Հոդված 6*

#### **Հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա ամենաարդյունավետ օդորակիչների մասով կողմնորոշիչ հենանիշերը սահմանված են IV հավելվածով:

#### *Հոդված 7*

#### **Վերանայումը**

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից եւ այդ վերանայման արդյունքն էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում: Վերանայմամբ պետք է մասնավորապես գնահատվեն արդյունավետության եւ ձայնի հզորության մակարդակի նկատմամբ պահանջները, ցածր զլոբալ տաքացման ներուժ (ԳՏՆ) ունեցող սառնազդակների օգտագործումը խթանելու մոտեցումը եւ օդորակիչների մասով կանոնակարգի շրջանակն ու սարքվածքների տեսակների, այդ թվում՝ 12կՎտ-ից բարձր ելքային անվանական հզորությամբ օդորակիչների՝ շուկայում ունեցած մասնաբաժինների հնարավոր փոփոխությունները: Վերանայմամբ նաեւ պետք է գնահատվեն սպասման եւ անջատված ռեժիմների նպատակահարմարությունը, սեզոնային հաշվարկման եւ չափման մեթոդը, այդ թվում՝ բոլոր օդորակիչների համար հնարավոր սեզոնային հաշվարկման եւ չափման մեթոդի մշակման վերաբերյալ պատկերացումները՝ հովացման եւ ջեռուցման սեզոնների շրջանակներում:

*Հոդված 8***Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:
2. Կիրառելի է 2013 թվականի հունվարի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում: Կատարված է Բրյուսելում 2012 թվականի մարտի 6-ին:

*Հանձնաժողովի կողմից՝*

*Նախագահ*

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

---

**ՀԱՎԵԼՎԱԾ I****Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները**

1. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԻՐԱՌԵԼԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ
  - 1) «Դարձակոխային (ռեվերս) օդորակիչ» նշանակում է օդորակիչ, որն ունի թե՛ հովացման եւ թե՛ ջեռուցման հնարավորություն.
  - 2) «սրանդարտ անվանական պայմաններ» նշանակում է ներսի ջերմաստիճանի ( $T_{ներս}$ ) եւ դրսի ջերմաստիճանի ( $T_j$ ) համակցություն, որով նկարագրվում են գործարկման պայմանները՝ միաժամանակ սահմանելով ձայնի հզորության մակարդակը, անվանական հզորությունը, օդի հոսքի անվանական արագությունը, էներգաարդյունավետության անվանական գործակիցը ( $EԱԳ_{անվանական}$ ) եւ (կամ) օգտակար գործողության անվանական գործակիցը ( $OԳԳ_{անվանական}$ ), ինչպես սահմանված է II հավելվածի 2-րդ աղյուսակում.
  - 3) «ներսի ջերմաստիճան» ( $T_{ներս}$ ) նշանակում է ներսի օդի ջերմաստիճան՝ ըստ չոր ջերմաչափի [ $^{\circ}\text{C}$ ] (հարաբերական խոնավության՝ թաց ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանով նշմամբ).
  - 4) «դրսի ջերմաստիճան» ( $T_j$ ) նշանակում է դրսի օդի ջերմաստիճան՝ ըստ չոր ջերմաչափի [ $^{\circ}\text{C}$ ] (հարաբերական խոնավության՝ խոնավ ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանով նշմամբ).
  - 5) «էներգաարդյունավետության անվանական գործակից» ( $EԱԳ_{անվանական}$ ) նշանակում է հովացման համար սահմանված հզորություն [կՎտ]՝ բաժանած սարքի՝ հովացման համար մուտքային անվանական հզորությանը [կՎտ] ստանդարտ անվանական պայմաններում հովացում ապահովելիս.
  - 6) «օգտակար գործողության անվանական գործակից» ( $OԳԳ_{անվանական}$ ) նշանակում է ջեռուցման համար սահմանված հզորություն [կՎտ]՝

բաժանած սարքի՝ ջեռուցման համար մուտքային անվանական հզորությանը [կՎտ] ստանդարտ անվանական պայմաններում ջեռուցում ապահովելիս.

- 7) «գլոբալ տաքացման ներուժ» (ԳՏՆ) նշանակում է գլոբալ խտացման ցիկլում կիրառվող 1 կգ սառնազդակի՝ գլոբալ տաքացմանը նպաստելու գնահատված չափը՝ արտահայտված CO<sub>2</sub>-ի կգ համարժեքով՝ 100-ամյա ժամանակահատվածի համար.

ԳՏՆ-ի դիտարկվող արժեքները թիվ 842/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածով սահմանված արժեքներն են.

Ֆտորացված սառնազդակների համար ԳՏՆ-ի արժեքները պետք է լինեն Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՄԽ) կողմից ընդունված՝ Երրորդ գնահատման զեկույցի (ԵԳՀ) մեջ հրապարակված արժեքները<sup>1</sup> (2001 ԿՓՄԽ ԳՏՆ-ի արժեքներ՝ 100-ամյա ժամանակահատվածի համար).

ոչ ֆտորացված գազերի համար ԳՏՆ-ի արժեքները ԿՓՄԽ առաջին գնահատման<sup>2</sup> մեջ 100-ամյա ժամանակահատվածի համար հրապարակված արժեքներն են.

սառնազդակների խառնուրդների համար ԳՏՆ-ի արժեքները պետք է հիմնված լինեն թիվ 842/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում ներկայացված բանաձևի վրա.

վերոհիշյալ հղումներում չընդգրկված սառնազդակների համար որպես հղում պետք է օգտագործվի ՄԱԿՇՄԾ-ի (ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր) ԿՓՄԽ-ի 2010 թվականի զեկույցը՝ սառնարանային, օդորակման եւ ջեռուցման պոմպերի վերաբերյալ՝ թվագրված 2011 թվականի փետրվարով, կամ դրա ավելի նոր տարբերակը.

<sup>1</sup> ԿՓՄԽ՝ Կլիմայի փոփոխության վերաբերյալ 2001 թվականի երրորդ գնահատում: Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խորհրդի զեկույցը՝ [http://www.ipcc.ch/publications\\_and\\_data/publications\\_and\\_data\\_reports.shtml](http://www.ipcc.ch/publications_and_data/publications_and_data_reports.shtml)

<sup>2</sup> Կլիմայի փոփոխություն, ԿՓՄԽ գիտական գնահատում, Զ.Թ. Հոութոն, Գ. Զ. Ջենքինս, Զ. Զ. Էֆրոն (խմբ.), «Քենբրիջ յունիվերսիթի փրես», Քենբրիջ (ՄԹ) 1990:

- 8) «անջատված ռեժիմ» նշանակում է վիճակ, որի ժամանակ օդորակիչը կամ կենցաղային օդափոխիչը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին եւ որեւէ ֆունկցիա չի կատարում: Որպես «անջատված» ռեժիմ պետք է դիտարկվեն այն պայմանները, որտեղ առկա է միայն «անջատված ռեժիմի» վիճակի ցուցանշում, ինչպես նաեւ այն պայմանները, որոնց դեպքում առկա են միայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի<sup>1</sup> 2004/108/ԵՀ հրահանգին համապատասխան էլեկտրամագնիսական համատեղելիություն ապահովելուն ուղղված ֆունկցիոնալ հնարավորություններ:
- 9) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ սարքավորումը (օդորակիչը կամ կենցաղային օդափոխիչը) միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից եւ կատարում է միայն հետեւյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակ՝ վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա եւ միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի մասին ցուցանշում եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում:
- 10) «վերաակտիվացման ֆունկցիա» նշանակում է ֆունկցիա, որը հեշտացնում է այլ ռեժիմների ակտիվացումը, այդ թվում՝ ակտիվ ռեժիմը հեռակառավարման անջատիչի, այդ թվում՝ հեռակառավարման վահանակի, ներքին սենսորի, լրացուցիչ ֆունկցիաներ, այդ թվում՝ հիմնական ֆունկցիան ապահովող ռեժիմով ժամաչափի միջոցով:
- 11) «տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում» նշանակում է շարունակական ֆունկցիա, որը ցուցասարքի, այդ թվում՝ ժամացույցների վրա տրամադրում է տեղեկություններ կամ ցույց է տալիս սարքավորման կարգավիճակը:

<sup>1</sup> ՊՏ L 390, 31.12.2004թ., էջ 24:

- 12) «ձայնի հզորության մակարդակ» նշանակում է Ա կորով որոշված ձայնի հզորության մակարդակ  $[L_{p(A)}]$  ներսում եւ (կամ) դրում՝ չափված սրանդարտ անվանական պայմաններում հովացման համար (կամ ջեռուցման համար, եթե արտադրանքը չունի հովացման ֆունկցիա).
- 13) «սկզբնական հաշվարկային պայմաններ» նշանակում է սկզբնական հաշվարկային ջերմաստիճանին, երկարժեք առավելագույն ջերմաստիճանին եւ գործարկման առավելագույն սահմանային ջերմաստիճանին ներկայացվող պահանջների համակցություն, ինչպես սահմանված է II հավելվածի 3-րդ աղյուսակով.
- 14) «սկզբնական հաշվարկային ջերմաստիճան» նշանակում է դրսի ջերմաստիճան  $[^{\circ}C]$ ՝ հովացման ( $Q_{\text{հաշվարկային } h.}$ ) կամ ջեռուցման համար ( $Q_{\text{հաշվարկային } \chi}$ ), ինչպես նկարագրված է II հավելվածի 3-րդ աղյուսակում, որի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը պետք է հավասար լինի 1-ի, եւ որը տատանվում է՝ կախված հովացման կամ ջեռուցման նախատեսված սեզոնից.
- 15) «մասնակի բեռնվածքի գործակից» ( $pl(Tj)$ ) նշանակում է դրսի ջերմաստիճան՝ հանած  $16^{\circ}C$ , բաժանած սկզբնական հաշվարկային ջերմաստիճանին, հանած  $16^{\circ}C$ ՝ հովացման կամ ջեռուցման համար.
- 16) «սեզոն» նշանակում է գործարկման պայմանների չորս խմբերից մեկը (առկա է չորս սեզոնների համար՝ մեկ հովացման սեզոն, երեք ջեռուցման սեզոն՝ միջին, ավելի սառը, ավելի տաք), որը մեկ բինի հաշվարկով նկարագրում է դրսի ջերմաստիճանները եւ մեկ սեզոնում այդ ջերմաստիճանների ապահովման այն ժամերի թվի համակցությունը, որի համար սարքը համարվում է նպատակային նշանակությանը համապատասխանող.



- 17) «բին» («j» ինդեքսով) նշանակում է *դրսի ջերմաստիճանի (Tj)* եւ *բին ժամերի (hj)* համակցություն, ինչպես սահմանված է II հավելվածի 1-ին աղյուսակում.
- 18) «բին ժամեր» նշանակում է սեզոնային կտրվածքով այն ժամերը (hj), որոնց ընթացքում *դրսի ջերմաստիճան* է ապահովվում յուրաքանչյուր *բինի* համար, ինչպես սահմանված է II հավելվածի 1-ին աղյուսակում.
- 19) «*էներգաարդյունավետության սեզոնային գործակից*» (E<sub>ԱՍԳ</sub>) նշանակում է սարքի ընդհանուր էներգաարդյունավետության գործակից, որն արտացոլում է հովացման ամբողջ սեզոնը՝ հաշվարկված որպես հովացման սկզբնական տարեկան պահանջարկ՝ բաժանած *հովացման համար էլեկտրականության տարեկան սպառմանը*.
- 20) «*հովացման սկզբնական տարեկան պահանջարկ*» (Q<sub><</sub>) նշանակում է հովացման սկզբնական պահանջարկ [կՎտժ/տ], որը ենթակա է օգտագործման որպես E<sub>ԱՍԳ</sub>-ի հաշվարկի հիմք եւ հաշվարկվում է որպես *հովացման համար հաշվարկային բեռնվածքի (P<sub>հաշվարկային հ.</sub>)* եւ *հովացման համար ակտիվ ռեժիմում համարժեք ժամերի* արտադրյալ (Ժ<sub><<</sub>).
- 21) «*հովացման համար ակտիվ ռեժիմում համարժեք ժամեր*» (Ժ<sub><<</sub>) նշանակում է տարեկան ժամերի ենթադրյալ թիվը [Ժ/տ], որոնց ընթացքում սարքը պետք է ապահովի *հովացման համար հաշվարկային բեռնվածք (P<sub>հաշվարկային հ.</sub>)*՝ *հովացման սկզբնական տարեկան պահանջարկը* բավարարելու նպատակով, ինչպես սահմանված է II հավելվածի 4-րդ աղյուսակով.
- 22) «*հովացման համար էլեկտրականության տարեկան սպառում*» (Q<sub><է</sub>) նշանակում է *հովացման սկզբնական տարեկան պահանջարկը* բավարարելու համար պահանջվող էլեկտրասպառում [կՎտժ/տ], որը

հաշվարկվում է որպես հովացման սկզբնական տարեկան պահանջարկ՝ բաժանած ակտիվ ռեժիմում սեզոնային էներգաարդյունավետության գործակցին (ԷԱՍԳ<sub>միացված</sub>) եւ սարքի կողմից էլեկտրականության սպառմանը՝ «ջերմապահպանիչից անջատված», «սպասման», «անջատված» ռեժիմներում եւ կարտերային տաքացուցչի ռեժիմում՝ հովացման սեզոնի ընթացքում.

- 23) «ակտիվ ռեժիմում սեզոնային էներգաարդյունավետության գործակցից» (ԷԱՍԳ<sub>միացված</sub>) նշանակում է սարքի միջին էներգաարդյունավետության գործակցից ակտիվ ռեժիմում՝ հովացման ֆունկցիայի համար, որը բաղկացած է մասնակի բեռնվածքին եւ բիներին բնորոշ էներգաարդյունավետության գործակցներից (ԷԱԳ<sub>բին</sub>(T<sub>j</sub>)) եւ չափվում է այն բին ժամերով, որոնց ընթացքում առաջանում է բինի համար սահմանված վիճակ.
- 24) «մասնակի բեռնվածք» նշանակում է հովացման բեռնվածք (Pc(T<sub>j</sub>)) կամ ջեռուցման բեռնվածք (Ph(T<sub>j</sub>)) [կՎտ] որոշակի դրսի ջերմաստիճանի T<sub>j</sub> պայմաններում՝ հաշվարկված որպես հաշվարկային բեռնվածք՝ բազմապատկած մասնակի բեռնվածքի գործակցով.
- 25) «բինին բնորոշ էներգաարդյունավետության գործակցից» (ԷԱԳ<sub>բին</sub>(T<sub>j</sub>)) նշանակում է յուրաքանչյուր j բինին բնորոշ էներգաարդյունավետության գործակցից՝ սեզոնի ընթացքում դրսի T<sub>j</sub> ջերմաստիճանի պայմաններում, որն ստացվում է մասնակի բեռնվածքից, որոշակի «j» բիների համար սահմանված հզորությունից եւ էներգաարդյունավետության սահմանված գործակցից (ԷԱԳ<sub>u</sub>(T<sub>j</sub>)), իսկ այլ բիների համար հաշվարկվում է միջարկման (արտարկման) միջոցով՝ անհրաժեշտության դեպքում արդյունավետության նվազման գործակցի միջոցով ճշգրտմամբ.

- 26) «*օգտակար գործողության սեզոնային գործակից*» (OԳՍԳ) նշանակում է սարքի օգտակար գործողության ընդհանուր գործակից, որն արտացոլում է սահմանված ջեռուցման ամբողջ սեզոնը (OԳՍԳ-ի արժեքը վերաբերում է ջեռուցման սահմանված սեզոնին), հաշվարկվում է *որպես ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկ*՝ բաժանած ջեռուցման համար էլեկտրականության տարեկան սպառմամբ.
- 27) «*ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկ*» (Q<sub>Ձ</sub>) նշանակում է ջեռուցման սկզբնական պահանջարկ [կՎտժ/տ], որը վերաբերում է սահմանված ջեռուցման սեզոնին, ենթակա է օգտագործման որպես OԳՍԳ-ի հաշվարկի հիմք եւ հաշվարկվում է որպես *ջեռուցման համար հաշվարկային բեռնվածքի* (P<sub>հաշվարկային ջ.</sub>) եւ ջեռուցման համար ակտիվ սեզոնային ռեժիմում համարժեք ժամերի արտադրյալ (Ժ<sub>ՁՀ</sub>).
- 28) «*ջեռուցման համար ակտիվ ռեժիմում համարժեք ժամեր*» (Ժ<sub>ՁՀ</sub>) նշանակում է տարեկան ժամերի ենթադրյալ թիվը [ժ/տ], որոնց ընթացքում սարքը պետք է ապահովի *ջեռուցման համար հաշվարկային բեռնվածքը* (P<sub>հաշվարկային ջ.</sub>)՝ *ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկը* բավարարելու նպատակով, ինչպես սահմանված է II հավելվածի 4-րդ աղյուսակում.
- 29) «*ջեռուցման համար էլեկտրականության տարեկան սպառում*» (Q<sub>ՁԷ</sub>) նշանակում է էլեկտրականության սպառում [կՎտժ/տ], որն անհրաժեշտ է ջեռուցման՝ նշված սկզբնական տարեկան պահանջարկը բավարարելու համար եւ վերաբերում է սահմանված ջեռուցման սեզոնին եւ հաշվարկվում է *որպես ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկը* բաժանած *ակտիվ ռեժիմում օգտակար գործողության սեզոնային գործակցով* (OԳՍԳ<sub>սիացված</sub>), եւ սարքի կողմից էլեկտրականության սպառմամբ՝ «*ջերմապահպանիչից անջատված*», «*սպասման*», «*անջատված*» ռեժիմներում եւ կարգերային տաքացուցչի ռեժիմում ջեռուցման սեզոնի ընթացքում.

- 30) «ակտիվ ռեժիմում օգտակար գործողության սեզոնային գործակից» (ՕԳՍԳ<sub>միացված</sub>) նշանակում է ջեռուցման սահմանված սեզոնի ընթացքում ակտիվ ռեժիմում սարքի օգտակար գործողության միջին գործակից, որը բաղկացած է մասնակի բեռնվածքից, էլեկտրական պահուստային ջերմային հզորությունից (անհրաժեշտության դեպքում) եւ բինին բնորոշ օգտակար գործողության գործակիցներից (ՕԳԳ<sub>բին</sub>(Tj) ու չափվում է այն բին ժամերով, որոնց ընթացքում առաջանում է բինի համար սահմանված վիճակ.
- 31) «էլեկտրական տաքացուցչի պահուստային հզորություն» (էլ.պահ.(Tj)) նշանակում է 1-ին հավասար ՕԳԳ ունեցող՝ իրական կամ ենթադրյալ էլեկտրական տաքացուցչի պահուստային հզորություն [կՎտ], որը լրացնում է ջեռուցման սահմանված հզորությունը (P<sub>սզ</sub>(Tj))՝ ջեռուցման համար մասնակի բեռնվածք (P<sub>2</sub>(Tj)) ապահովելու համար այն դեպքում, երբ P<sub>սզ</sub>(Tj)-ը փոքր է P<sub>2</sub>(Tj)-ից՝ դրսի ջերմաստիճանի (Tj) համար.
- 32) «բինին բնորոշ օգտակար գործողության գործակից» (ՕԳԳ<sub>բին</sub>(Tj)) նշանակում է յուրաքանչյուր j բինին բնորոշ՝ օգտակար գործողության գործակից՝ սեզոնի ընթացքում Tj դրսի ջերմաստիճանով, որը ստացվում է նշված բիների համար մասնակի բեռնվածքից, սահմանված հզորությունից եւ օգտակար գործողության սահմանված գործակցից (ՕԳԳ<sub>ս</sub>(Tj)) եւ հաշվարկված է այլ բիների համար միջարկման (արտարկման) միջոցով՝ անհրաժեշտության դեպքում արդյունավետության նվազման գործակցի միջոցով ճշգրտմամբ.
- 33) «սահմանված հզորություն» [կՎտ] նշանակում է սարքի՝ գոլորշու խտացման ցիկլի հզորությունը հովացման (P<sub>սհ</sub>(Tj)) կամ ջեռուցման (P<sub>սջ</sub>(Tj)) համար, համապատասխան դրսի Tj ջերմաստիճանի եւ ներսի (T<sub>ներս</sub>) ջերմաստիճանի դեպքում, ինչպես սահմանված է արտադրողի կողմից.

- 34) «*ճառայության արժեք*» (ԾԱ)՝ [(մ<sup>3</sup>/ր)/Վտ] նշանակում է կենցաղային օդափոխիչների համար օդափոխիչում օդի առավելագույն հոսքի [մ<sup>3</sup>/ր] եւ օդափոխիչի մուտքային հզորության [Վտ] հարաբերակցությունը.
- 35) «*հզորության հսկողություն*» նշանակում է սարքի՝ ծավալային արագությունը փոփոխելու միջոցով իր հզորությունը փոփոխելու կարողություն: Սարքերի վրա պետք է նշված լինի «Ֆիքսված» բառը, եթե սարքավորումը չի կարող փոփոխել իր ծավալային արագությունը, «փոփոխելի», եթե ծավալային արագությունը փոփոխվում կամ տատանվում է երկուսից ոչ ավելի քայլերի հաջորդականությամբ, կամ «փոփոխական», եթե ծավալային արագությունը փոփոխվում կամ տատանվում է երեք կամ ավելի քայլերի հաջորդականությամբ.
- 36) «*ֆունկցիա*» նշանակում է նշում սարքի՝ ներսի օդի հովացման, ներսի օդի ջեռուցման կամ երկուսի կարողության մասին.
- 37) «*հաշվարկային բեռնվածք*» նշանակում է հովացման սահմանված բեռնվածք (*P*<sub>հաշվարկային հ.</sub>) եւ (կամ) ջեռուցման սահմանված բեռնվածք (*P*<sub>հաշվարկային ջ.</sub>) [կՎտ] սկզբնական հաշվարկային ջերմաստիճանի պայմաններում, որտեղ՝  
 հովացման ռեժիմի համար *P*<sub>հաշվարկային հ.</sub>-ն հավասար է հովացման համար *սահմանված հզորությանը* Tj-ի դեպքում, որն հավասար է *P*<sub>հաշվարկային հ.</sub>-ին.  
 ջեռուցման ռեժիմի համար *P*<sub>հաշվարկային ջ.</sub>-ն հավասար է *մասնակի բեռնվածքին* Tj-ի դեպքում, որը հավասար է *P*<sub>հաշվարկային ջ.</sub>-ին.
- 38) «*էներգաարդյունավետության սահմանված գործակից*» (էԱԳս(Tj)) նշանակում է էներգաարդյունավետության գործակից նշված (j) *բիների* սահմանափակ թվի պարագայում՝ դրսի (Tj) ջերմաստիճանի պայմաններում, ինչպես սահմանված է արտադրողի կողմից.

- 39) «օգտակար գործողության սահմանված գործակից» (OԳԳս(Tj)) նշանակում է օգտակար գործողության գործակից *նշված (j) բիների* սահմանափակ թվի պարագայում՝ դրսի (Tj) ջերմաստիճանի պայմաններում, ինչպես սահմանված է արտադրողի կողմից.
- 40) «*երկարժեք ջերմաստիճան*» (Tերկ.) նշանակում է արտադրողի կողմից ջեռուցման համար սահմանված *դրսի ջերմաստիճան (Tj)* [°C], որի դեպքում *սահմանված հզորությունը* հավասար է *մասնակի բեռնվածքին* եւ որից ցածր *սահմանված հզորությունը* պետք է լրացվի *էլեկտրական տաքացուցչի պահուստային հզորությամբ*՝ ջեռուցման համար *մասնակի բեռնվածքն* ապահովելու համար.
- 41) «*գործարկման սահմանային ջերմաստիճան*» (Tգ.ս.) նշանակում է արտադրողի կողմից ջեռուցման համար սահմանված դրսի ջերմաստիճան [°C] , որից ցածր ջերմաստիճանի պարագայում օդորակիչը չի կարող ունենալ ջեռուցման որեւէ հնարավորություն: Այս ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանի դեպքում *սահմանված հզորությունը* հավասար է զրոյի.
- 42) «*ցիկլիկ աշխատանքի ժամանակամիջոցի* հզորություն» [կՎտ] նշանակում է սահմանված հզորության միջին (ժամանակով չափված)՝ հովացման (Pցիկլ.հ.) կամ ջեռուցման (Pցիկլ.ջ.) ցիկլային փորձաստուգման ընթացքում.
- 43) «*ցիկլիկ աշխատանքի ժամանակամիջոցի արդյունավետություն հովացման համար*» (էԱԳցիկլ.) նշանակում է էներգաարդյունավետության միջին գործակից ցիկլային փորձաստուգման ընթացքում (ճնշակի (կոմպրեսորի) միացման եւ անջատման պայմաններում)՝ հաշվարկված որպես որոշակի ժամանակամիջոցում հովացման ինտեգրված կարողություն [կՎտ/ժ]՝ բաժանած նույն ժամանակամիջոցում ինտեգրված մուտքային էլեկտրական հզորությամբ [կՎտ/ժ].

- 44) «*ցիկլիկ աշխատանքի ժամանակամիջոցի արդյունավետություն ջեռուցման համար*» (OԳԳցիկլ.) նշանակում է օգտակար գործողության միջին գործակից ցիկլային փորձաստուգման ընթացքում (ճնշակի (կոմպրեսորի) միացման եւ անջատման պայմաններում)՝ հաշվարկված որպես որոշակի ժամանակամիջոցում ինտեգրված ջերմարտադրություն [կՎտ/ժ]՝ բաժանած նույն ժամանակամիջոցում ինտեգրված մուտքային հզորությանը [կՎտ/ժ].
- 45) «*արդյունավետության նվազման գործակից*» նշանակում է ցիկլիկ աշխատանքի արդյունքում (ճնշակի՝ ակտիվ ռեժիմում միացման (անջատման) պայմաններում) արդյունավետության կորստի չափ՝ սահմանված հովացման (Cdh), ջեռուցման (Cdջ) համար կամ ընտրված որպես 0,25 դեֆոլտային արժեք.
- 46) «*ակտիվ ռեժիմ*» նշանակում է շենքի հովացման կամ ջեռուցման բեռնվածքով աշխատանքի ժամերին համապատասխանող ռեժիմ, որի դեպքում ակտիվացված է սարքի հովացման կամ ջեռուցման ֆունկցիան: Այս պայմանը կարող է ներառել սարքի գործարկում (դադար)՝ ներսի օդի պահանջվող ջերմաստիճանին հասնելու կամ այն պահպանելու նպատակով.
- 47) «*ջերմապահպանիչից անջատված ռեժիմ*»՝ առանց հովացման կամ ջեռուցման բեռնվածքի աշխատանքի ժամերին համապատասխանող ռեժիմ, որի դեպքում սարքի հովացման կամ ջեռուցման ֆունկցիան միանում է, սակայն սարքը պատրաստ չէ գործարկման, քանի որ առկա չէ հովացման կամ ջեռուցման բեռնվածք: Հետեւաբար այս պայմանը վերաբերում է դրսի ջերմաստիճաններին, այլ ոչ թե ներսի բեռնվածքներին: Ակտիվ ռեժիմում գործարկումը/դադարը չի համարվում «ջերմապահպանիչից անջատված ռեժիմ»:

- 48) «կարտերային տաքացուցչի աշխատանքի ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում սարքն ակտիվացրել է տաքացուցիչը՝ դեպի կոմպրեսոր սառնազդակի անցումից խուսափելու համար՝ կոմպրեսորի գործարկման պահին յուղում սառնազդակի կոնցենտրացիան սահմանափակելու նպատակով.
- 49) «ջերմապահպանիչից անջատված ռեժիմով էներգասպառում» (P<sub>ջս</sub>) նշանակում է սարքի կողմից էներգասպառում [կՎտ]՝ *ջերմապահպանիչից անջատված ռեժիմով*.
- 50) «էներգասպառում սպասման ռեժիմում» (P<sub>սո</sub>) նշանակում է սարքի կողմից էներգասպառում [կՎտ] *սպասման ռեժիմում*.
- 51) «էներգասպառում անջատված ռեժիմում» (P<sub>սսզսսսս</sub>) նշանակում է սարքի կողմից էներգասպառում [կՎտ] *անջատված ռեժիմում*.
- 52) «էներգասպառում կարտերային տաքացուցչի ռեժիմում» (P<sub>կսր</sub>) նշանակում է սարքի կողմից էներգասպառում [կՎտ] կարտերային տաքացուցչի աշխատանքի ռեժիմում.
- 53) «ջերմապահպանիչից անջատված ռեժիմի գործարկման ժամեր» (Ժ<sub>ջս</sub>) նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում (Ժ/տ), որոնց ժամանակ համարվում է, որ սարքը գտնվում է «ջերմապահպանիչից անջատված» ռեժիմում, որի արժեքը կախված է նշված սեզոնից եւ ֆունկցիայից.
- 54) «սպասման ռեժիմում գործարկման ժամեր (Ժ<sub>սո</sub>)» նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում [Ժ/տ], որոնց ժամանակ համարվում է, որ սարքը գտնվում է սպասման ռեժիմում, որի արժեքը կախված է սահմանված սեզոնից եւ ֆունկցիայից.
- 55) «անջատված ռեժիմում գործարկման ժամեր» (Ժ<sub>սսզսսսս</sub>) նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում [Ժ/տ], որոնց ժամանակ



համարվում է, որ սարքը գտնվում է «անջատված» ռեժիմում, որի արժեքը կախված է նշված սեզոնից եւ ֆունկցիայից.

- 56) «կարտերային տաքացուցչի ռեժիմում գործարկման ժամեր» ( $\text{ժ}_{\text{արտ.}}$ ) նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում [ժ/տ], որոնց գործարկման ռեժիմում, որի արժեքը կախված է նշված սեզոնից եւ ֆունկցիայից.
- 57) «օդի հոսքի անվանական արագություն» նշանակում է օդի հոսքի արագություն [ $\text{մ}^3/\text{ժ}$ ]՝ չափված օդորակիչների՝ ներսում եւ (կամ) դրսում տեղադրվող սարքերի (անհրաժեշտության դեպքում) օդատարներում՝ հովացման համար (կամ ջեռուցման համար, եթե արտադրանքը չունի հովացման ֆունկցիա)՝ ստանդարտ անվանական պայմաններում.
- 58) «հովացման համար մուտքային անվանական հզորություն» ( $P_{\text{էսգ}}$ ) նշանակում է սարքի՝ էլեկտրականության մուտքային հզորություն [կՎտ] ստանդարտ անվանական պայմաններում հովացում ապահովելիս.
- 59) «ջեռուցման համար մուտքային անվանական հզորություն» ( $P_{\text{օգգ}}$ ) նշանակում է սարքի՝ էլեկտրականության մուտքային հզորություն [կՎտ] ստանդարտ անվանական պայմաններում ջեռուցում ապահովելիս.
- 60) «միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների կողմից էլեկտրականության սպառում» ( $Q_{\text{միախող.}}$ , համապատասխանաբար՝  $Q_{\text{երկխող.}}$ ) նշանակում է էլեկտրականության սպառումը միախողովակ կամ երկխողովակ օդորակիչների կողմից հովացման եւ (կամ) ջեռուցման ռեժիմի համար (որը որ կիրառելի է) [միախողովակ օդորակիչները՝ կՎտժ/ժ-ով, երկխողովակ օդորակիչները՝ կՎտժ/տ-ով].
- 61) «հզորության հարաբերակցություն» նշանակում է ներսում տեղադրված բոլոր գործարկվող սարքերի հովացման կամ ջեռուցման ընդհանուր սահմանված հզորության հարաբերակցությունը դրսում տեղադրված սարքի՝ հովացման կամ ջեռուցման հզորությանը ստանդարտ անվանական պայմաններում.

- 62) «*օդափոխիչի առավելագույն արագություն*» (F) նշանակում է կենցաղային օդափոխիչի օդի հոսքի արագությունը՝ առավելագույն կարգավորմամբ [ $m^3/ր$ ]՝ չափված օդափոխիչի օդատարում (անհրաժեշտության դեպքում)՝ *տատանվող մեխանիզմի* անջատված լինելու պայմաններում.
- 63) «*տատանվող մեխանիզմ*» նշանակում է՝ կենցաղային օդափոխիչի՝ օդի հոսքի ուղղությունն ավտոմատ կերպով փոխելու կարողություն դրա գործարկման ընթացքում.
- 64) «*օդափոխիչի ձայնի հզորության մակարդակ*» նշանակում է կենցաղային օդափոխիչի՝ A կորով որոշված ձայնի հզորության մակարդակն օդափոխիչի առավելագույն արագության գործարկման պայմաններում՝ չափված օդատարի հատվածում.
- 65) «*օդափոխիչի ակտիվ ռեժիմի ժամեր*» ( $\sigma_{\ll}$ ) նշանակում է այն ժամերի թիվը ( $\sigma/տ$ ), որոնց ընթացքում ենթադրվում է, որ կենցաղային օդափոխիչն ապահովում է *օդափոխիչի* առավելագույն արագություն, ինչպես նկարագրված է II հավելվածի 4-րդ աղյուսակում:

2. ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆԸ, «ԱՆՋԱՏՎԱԾ» ԵՎ «ՍՊԱՍՄԱՆ» ՌԵԺԻՄՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆԸ ԵՎ ՁԱՅՆԻ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ա) 2013 թվականի հունվարի 1-ից միախողովակ եւ երկխողովակ օդորակիչները պետք է համապատասխանեն ստորեւ ներկայացված 1-ին, 2-րդ եւ 3-րդ աղյուսակներում նշված պահանջներին՝ հաշվարկված II հավելվածին համապատասխան: Միախողովակ եւ երկխողովակ օդորակիչները եւ կենցաղային օդափոխիչները պետք է բավարարեն պահանջները «սպասման» կամ «անջատված» ռեժիմում, ինչպես նշված է ստորեւ ներկայացված 2-րդ

աղյուսակում: Նվազագույն էներգաարդյունավետությանը եւ ձայնի հզորության առավելագույն մակարդակին ներկայացվող պահանջները պետք է բավարարեն II հավելվածի 2-րդ աղյուսակում նշված ստանդարտ անվանական պայմանները:

*Աղյուսակ 1*

**Նվազագույն էներգաարդյունավետության մասով ներկայացվող պահանջները**

	Երկխողովակ օդորակիչներ		Միախողովակ օդորակիչներ	
	ԷԱԳ <sub>անվանական</sub>	ՕԳԳ <sub>անվանական</sub>	ԷԱԳ <sub>անվանական</sub>	ՕԳԳ <sub>անվանական</sub>
Եթե սառնազդակի ԳՏՆ-ն > 150-ից	2,40	2,36	2,40	1,80
Եթե սառնազդակի ԳՏՆ-ն ≤ 150-ից	2,16	2,12	2,16	1,62

*Աղյուսակ 2*

**«Անջատված» կամ «սպասման» ռեժիմում միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների եւ կենցաղային օդափոխիչների առավելագույն էներգասպառմանը ներկայացվող պահանջներ**

«Անջատված» ռեժիմ	Սարքավորման էներգասպառումն անջատված ռեժիմի ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:
«Սպասման» ռեժիմ	<p>Միայն վերաակտիվացման ֆունկցիա կամ միայն վերաակտիվացման ֆունկցիա եւ միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի ցուցանշում ապահովող ցանկացած վիճակում սարքավորման էներգասպառումը չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:</p> <p>Միայն տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում կամ միայն վերաակտիվացման ֆունկցիայի եւ տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցանշման համակցություն ապահովող ցանկացած վիճակում սարքավորման էներգասպառումը չպետք է գերազանցի 2,00 Վտ-ը:</p>
«Սպասման» եւ (կամ) «անջատված» ռեժիմի հասանելիությունը	Սարքավորումը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում դրա նպատակային օգտագործմանը, ապահովի «անջատված» ռեժիմ եւ (կամ) «սպասման» ռեժիմ եւ (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերազանցվում «անջատված» ռեժիմում եւ (կամ) «սպասման» ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին:

### Աղյուսակ 3

#### Ձայնի հզորության առավելագույն մակարդակին ներկայացվող պահանջները

Ներսի ձայնի հզորության մակարդակը՝ դԲ(A)-ով

65

- բ) 2013 թվականի հունվարի 1-ից օդորակիչները, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, պետք է համապատասխանեն ստորեւ ներկայացված 4-րդ եւ 5-րդ աղյուսակներում նշված նվազագույն էներգաարդյունավետության եւ ձայնի հզորության առավելագույն մակարդակի պահանջներին՝ հաշվարկված II հավելվածին համապատասխան: Էներգաարդյունավետության վերաբերյալ պահանջները պետք է հաշվի առնեն II հավելվածի 3-րդ աղյուսակում նշված սկզբնական հաշվարկային պայմանները՝ համապատասխան դեպքերում օգտագործելով «միջին» ջեռուցման սեզոնը: Ձայնի հզորության մակարդակի նկատմամբ պահանջներն առնչվում են II հավելվածի 2-րդ աղյուսակում նշված ստանդարտ անվանական պայմաններին:

### Աղյուսակ 4

#### Նվազագույն էներգաարդյունավետությանը ներկայացվող պահանջները

	ԷԱՍԳ	ՕԳՍԳ (Միջին ջեռուցման սեզոն)
Եթե սառնազդակի ԳՏՆ-ն > 150	3,60	3,40
Եթե սառնազդակի ԳՏՆ-ն ≤ 150	3,24	3,06

*Աղյուսակ 5*

**Ձայնի հզորության առավելագույն մակարդակին ներկայացվող պահանջները**

Անվանական հզորություն ≤ 6 կՎտ		6 < Անվանական հզորություն ≤ 12 կՎտ	
Ներսի ձայնի հզորության մակարդակը՝ դԲ(A)-ով	Դրսի ձայնի հզորության մակարդակը՝ դԲ(A)-ով	Ներսի ձայնի հզորության մակարդակը՝ դԲ(A)-ով	Դրսի ձայնի հզորության մակարդակը՝ դԲ(A)-ով
60	65	65	70

գ) 2014 թվականի հունվարի 1-ից օդորակիչները պետք է համապատասխանեն ստորեւ ներկայացված աղյուսակում նշված պահանջներին՝ հաշվարկված II հավելվածին համապատասխան: Օդորակիչների, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, էներգաարդյունավետությանը ներկայացվող պահանջները պետք է առնչվեն II հավելվածի 3-րդ աղյուսակում նշված սկզբնական հաշվարկային պայմաններին՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով «Միջին» ջեռուցման սեզոնը: Միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների էներգաարդյունավետությանը ներկայացվող պահանջները պետք է առնչվեն II հավելվածի 2-րդ աղյուսակում նշված ստանդարտ անվանական պայմաններին:

*Աղյուսակ 6*

**Նվազագույն էներգաարդյունավետությանը ներկայացվող պահանջները**

Օդորակիչներ՝ բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների		Երկխողովակ օդորակիչներ		Միախողովակ օդորակիչներ	
ԷԱՍԳ	ՕԳՍԳ (ջեռուցման սեզոն՝	ԷԱԳ <sub>անվանական</sub>	ՕԳԳ <sub>անվանական</sub>	ԷԱԳ <sub>անվանական</sub>	ՕԳԳ <sub>անվանական</sub>

		Միջին)				
Եթե սառնազրակի ԳՏՆ-ն > 150, < 6 կՎտ-ի համար	4,60	3,80	2,60	2,60	2,60	2,04
Եթե սառնազրակի ԳՏՆ-ն ≤150, < 6 կՎտ-ի համար	4,14	3,42	2,34	2,34	2,34	1,84
Եթե սառնազրակի ԳՏՆ-ն > 150-ից՝ 6-12 կՎտ-ի համար	4,30	3,80	2,60	2,60	2,60	2,04
Եթե սառնազրակի ԳՏՆ-ն ≤150-ից՝ 6-12 կՎտ-ի համար	3,87	3,42	2,34	2,34	2,34	1,84

դ) 2014 թվականի հունվարի 1-ից միախողովակ եւ երկխողովակ օդորակիչներն ու կենցաղային օդափոխիչները պետք է համապատասխանեն ստորեւ ներկայացված աղյուսակում նշված պահանջներին՝ հաշվարկված II հավելվածին համապատասխան:

*Աղյուսակ 7*

**«Անջատված» եւ «սպասման» ռեժիմներում առավելագույն  
էներգասպառմանը ներկայացվող պահանջները**

«Անջատված» ռեժիմ	Սարքավորման էներգասպառումը «անջատված» ռեժիմի ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 0,50 Վտ-ը:
«Սպասման» ռեժիմ	Միայն վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա եւ միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի ցուցանշում ապահովող ցանկացած վիճակում սարքավորման էներգասպառումը չպետք է գերազանցի 0,50 Վտ-ը:  Միայն տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում կամ միայն վերաակտիվացման ֆունկցիայի եւ տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրման համակցություն ապահովող ցանկացած վիճակում սարքավորման էներգասպառումը չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:
«Սպասման» եւ «անջատված» հասանելիությունը	(կամ) Սարքավորումը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում դրա նպատակային օգտագործմանը, ապահովի «անջատված» ռեժիմ եւ (կամ) «սպասման» ռեժիմ եւ (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերազանցվում անջատված ռեժիմում եւ (կամ) սպասման ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին:

Էներգախնայողության կառավարում	<p>Երբ սարքավորումը չի ապահովում հիմնական ֆունկցիայի կատարումը, կամ երբ այլ էներգասպառող արտադրանք (արտադրատեսակներ) կախված չէ (չեն) դրա ֆունկցիաներից, ապա սարքավորումը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում նպատակային օգտագործմանը, ապահովի էներգախնայողության կառավարման ֆունկցիա կամ համանման ֆունկցիա, որի միջոցով իր նպատակային օգտագործմանը համապատասխանող հնարավոր ամենակարճ ժամանակահատվածից հետո սարքավորումն ավտոմատ կերպով անցնում է՝</p> <p>— «սպասման ռեժիմի», կամ</p> <p>— «անջատված ռեժիմի», կամ</p> <p>— մեկ ուրիշ վիճակի, որի դեպքում չեն գերազանցվում «անջատված» եւ (կամ) «սպասման» ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին: Էներգախնայողության կառավարման ֆունկցիան պետք է ակտիվացվի նախքան սարքավորման առաքումը:</p>
-------------------------------	---

### 3. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- ա) 2013 թվականի հունվարի 1-ից օդորակիչների եւ կենցաղային օդափոխիչների մասով ստորեւ նշված կետերում ներկայացված եւ II հավելվածին համապատասխան հաշվարկված տեղեկությունները պետք է ներառեն հետեւյալը.
- i) արտադրանքի տեխնիկական փաստաթղթերը.
- ii) օդորակիչներ եւ կենցաղային օդափոխիչներ արտադրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերը.
- բ) օդորակիչներ եւ կենցաղային օդափոխիչներ արտադրողը պետք է շուկայի վերահսկողության ստուգումներ իրականացնող լաբորատորիաներին նման պահանջի դեպքում տրամադրի սարքավորման կարգավորմանն առնչվող անհրաժեշտ տեղեկություններ, որը կիրառվում է սահմանված կարողությունների, ԷԱՍԳ (ԷԱԳ), ՕԳՍԳ (ՕԳԳ) արժեքների եւ սպասարկման արժեքների

հաստատման ու նման տեղեկություններ ստանալու նպատակով կոնտակտային տվյալներ տրամադրելու համար.

- գ) տեղեկատվական պահանջներ օդորակիչների համար՝ բացառությամբ երկխողովակ եւ միախողովակ օդորակիչների:

*Աղյուսակ 1*

**Տեղեկություններին ներկայացվող պահանջները<sup>1</sup>**

(տուփի մեջ տասնորդականների թիվը ցույց է տալիս արձանագրման ճշգրտությունը)

Տեղեկություններ՝ որոշելու համար այն մոդելը (մոդելները), որին առնչվում են տեղեկությունները.

Ֆունկցիա (նշե՛ք, եթե առկա է)				Եթե ֆունկցիան ներառում է ջեռուցում, նշե՛ք ջեռուցման այն սեզոնը, որին առնչվում են տեղեկությունները: Նշված արժեքներից յուրաքանչյուրը պետք է վերաբերի ջեռուցման միայն մեկ սեզոնի: Ներառե՛ք առնվազն «Միջին» ջեռուցման սեզոնը:			
հովացում	Այն/ոչ			Միջինը (պարտադիր)	Այն/ոչ		
ջեռուցում	Այն/ոչ			Ավելի տաք (եթե նախատեսված է)	Այն/ոչ		
				Ավելի սառը (եթե նախատեսված է)	Այն/ոչ		
Անվանումը	պայմանանշանը	արժեքը	միավորը	Անվանումը	պայմանանշանը	արժեքը	միավորը
Հաշվարկային բեռնվածք				Սեզոնային արդյունավետություն			
հովացում	Փհաշվարկային հ.	x,x	կՎտ	հովացում	ԷԱՍԳ	x,x	—
ջեռուցում /Միջին	Փհաշվարկային ջ.	x,x	կՎտ	ջեռուցում /Միջին	ՕԳՍԳ/Ա	x,x	—
ջեռուցում / Ավելի տաք	Փհաշվարկային ջ.	x,x	կՎտ	ջեռուցում / Ավելի տաք	ՕԳՍԳ/Վտ	x,x	—
ջեռուցում / Ավելի սառը	Փհաշվարկային ջ.	x,x	կՎտ	ջեռուցում / Ավելի սառը	ՕԳՍԳ/Շ	x,x	—

<sup>1</sup> Մի քանի մասերից բաղկացած սարքավորումների համար տվյալները պետք է տրամադրվեն որպես հզորության օգտագործման 1 գործակից



Հովացման սահմանված հզորություն*՝ 27(19) °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում				Էներգաարդյունավետության սահմանված գործակից *՝ 27(19) °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում			
Ֆունկցիա (նշե՛ք, եթե առկա է)				Եթե ֆունկցիան ներառում է ջեռուցում, նշե՛ք ջեռուցման այն սեզոնը, որին առնչվում են տեղեկությունները: Նշված արժեքներից յուրաքանչյուրը պետք է վերաբերի ջեռուցման միայն մեկ սեզոնի: Ներառե՛ք առնվազն «Միջին» ջեռուցման սեզոնը:			
հովացում	Այո/ոչ			Միջինը (պարտադիր)	Այո/ոչ		
ջեռուցում	Այո/ոչ			Ավելի տաք (եթե նախատեսված է)	Այո/ոչ		
				Ավելի սառը (եթե նախատեսված է)	Այո/ոչ		
Անվանումը	պայմանա նշանը	արժեքը	միավորը	Անվանումը	պայմանա նշանը	արժեքը	միավորը
Tj = 35 °C	Pu.h.	x,x	կՎտ	Tj = 35 °C	էԱԳս.	x,x	—
Tj = 30 °C	Pu.h.	x,x	կՎտ	Tj = 30 °C	էԱԳս.	x,x	—
Tj = 25 °C	Pu.h.	x,x	կՎտ	Tj = 25 °C	էԱԳս.	x,x	—
Tj = 20 °C	Pu.h.	x,x	կՎտ	Tj = 20 °C	էԱԳս.	x,x	—
Ջեռուցման/Միջին սեզոնի համար սահմանված հզորություն*՝ 20 °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում				Օգտակար գործողության սահմանված գործակից*/Միջին սեզոն՝ 20 °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում			
Tj = - 7 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = - 7 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 2 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = 2 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 7 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = 7 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 12 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = 12 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = երկարժեք ջերմաստիճան	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = երկարժեք ջերմաստիճան	ՕԳԳս.	x,x	—
Tj = գործարկման սահման	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = գործարկման սահման	ՕԳԳհ.	x,x	—
Ջեռուցման/Ավելի տաք սեզոնի համար սահմանված հզորություն*՝ 20 °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում				Օգտակար գործողության սահմանված գործակից*/Ավելի տաք սեզոն՝ 20 °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում			
Tj = 2 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = 2 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 7 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = 7 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 12 °C	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = 12 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = երկարժեք ջերմաստիճան	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = երկարժեք ջերմաստիճան	ՕԳԳս.	x,x	—
Tj = գործարկման սահման	Pu.ջ.	x,x	կՎտ	Tj = գործարկման սահման	ՕԳԳս.	x,x	—
Ջեռուցման/Ավելի սառը սեզոնի համար սահմանված հզորություն*՝ 20 °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում				Օգտակար գործողության սահմանված գործակից*/Ավելի տաք սեզոն՝ 20 °C ներսի ջերմաստիճանի եւ Tj դրսի ջերմաստիճանի պայմաններում			

Tj = - 7 °C	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = - 7 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 2 °C	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = 2 °C	ՕԳԳս.	x,x	—
Գործառույթ (նշե՛ք, եթե առկա է)				Եթե գործառույթը ներառում է ջեռուցում, նշե՛ք ջեռուցման այն սեզոնը, որին առնչվում են տեղեկությունները: Նշված արժեքներից յուրաքանչյուրը պետք է վերաբերի ջեռուցման միայն մեկ սեզոնի: Ներառե՛ք առնվազն «Միջին» ջեռուցման սեզոնը:			
հովացում	Այո/ոչ			Միջինը (պարտադիր)	Այո/ոչ		
ջեռուցում	Այո/ոչ			Ավելի տաք (եթե նախատեսված է)	Այո/ոչ		
				Ավելի սառը (եթե նախատեսված է)	Այո/ոչ		
Անվանումը	պայմանա նշանը	արժեքը	միավորը	Անվանումը	պայմանա նշանը	արժեքը	միավորը
Tj = 7 °C	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = 7 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = 12 °C	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = 12 °C	ՕԳԳս.	x,x	—
Tj = երկարժեք ջերմաստիճան	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = երկարժեք ջերմաստիճան	ՕԳԳս.	x,x	—
Tj = գործարկման սահման	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = գործարկման սահման	ՕԳԳս.	x,x	—
Tj = - 15 °C	Քս.ջ.	x,x	կՎտ	Tj = - 15 °C	ՕԳԳս.	x,x	—
Երկարժեք ջերմաստիճան				Գործարկման սահմանային ջերմաստիճան			
ջեռուցում / Միջին	Դերկ.	x	°C	ջեռուցում / Միջին	Դգ.ս.	x	°C
ջեռուցում / Ավելի տաք	Դերկ.	x	°C	ջեռուցում / Ավելի տաք	Դգ.ս.	x	°C
ջեռուցում / Ավելի սառը	Դերկ.	x	°C	ջեռուցում / Ավելի սառը	Դգ.ս.	x	°C
Ցիկլիկ աշխատանքի ժամանակամիջոցի հզորություն				Ցիկլիկ աշխատանքի ժամանակամիջոցի արդյունավետություն			
հովացման համար	Քցիկլ.հ.	x,x	կՎտ	հովացման համար	ԷԱԳցիկլ.	x,x	—
ջեռուցման համար	Քցիկլ.ջ.	x,x	կՎտ	ջեռուցման համար	ՕԳԳցիկլ.	x,x	—
Հովացման արդյունավետության նվազման գործակից**	Շն.հ.	x,x	—	Ջեռուցման արդյունավետության նվազման գործակից**	Շն.ջ.	x,x	—
Մուտքային էլեկտրական հզորություն «ակտիվ ռեժիմ» հզորության ռեժիմից տարբերվող այլ էլեկտրաէներգիայի տարեկան սպառում հզորության ռեժիմներում							
«անջատված» ռեժիմ	Քս.ՋԱՍԿԱՍԵ	x,x	կՎտ	հովացում	Q<sub>է</sub>	x	կՎտժ/տ
սպասման ռեժիմ	Քս.Պ	x,x	կՎտ	ջեռուցում / Միջին	Q>sub>է</sub>	x	կՎտժ/տ

ջերմապահպանիչից անջատված ռեժիմ	P <sub>ջս</sub>	x,x	կՎտ	ջեռուցում / Ավելի տաք	Q <sub>ջե</sub>	x	կՎտ/տ
կարտերային տաքացուցչի ռեժիմ	P <sub>վս</sub>	x,x	կՎտ	ջեռուցում / Ավելի սառը	Q <sub>վե</sub>	x	կՎտ/տ
Հզորությունների կառավարում (նշե՛ք երեք տարբերակներից մեկը)				Այլ տվյալներ			
Ֆունկցիա (նշե՛ք, եթե առկա է)				Եթե ֆունկցիան ներառում է ջեռուցում, նշե՛ք ջեռուցման այն սեզոնը, որին առնչվում են տեղեկությունները: Նշված արժեքներից յուրաքանչյուրը պետք է վերաբերի ջեռուցման միայն մեկ սեզոնի: Ներառե՛ք առնվազն «Միջին» ջեռուցման սեզոնը:			
հովացում	Այո/ոչ			Միջինը (պարտադիր)	Այո/ոչ		
ջեռուցում	Այո/ոչ			Ավելի տաք (եթե նախատեսված է)	Այո/ոչ		
				Ավելի սառը (եթե նախատեսված է)	Այո/ոչ		
Անվանումը	պայմանանշանը	արժեքը	միավորը	Անվանումը	պայմանանշանը	արժեքը	միավորը
ֆիքսված	Այո/ոչ			Ձայնի հզորության մակարդակ (ներս/դուրս)	L <sub>WA</sub>	x,x/x,x	դԲ(A)
փոփոխելի	Այո/ոչ			Գլոբալ տաքացման ներուժ	ԳՏՆ	x	կգCO <sub>2</sub> հավ.
փոփոխական	Այո/ոչ			Օդի հոսքի անվանական արագություն (ներսի/դուրսի)	—	x/x	մ <sup>3</sup> /ժ
Կոնտակտային տվյալներ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը (անվանումը) եւ հասցեն:						
* Փուլային հզորությամբ սարքերի համար թեք գծով («/») բաժանված երկու արժեքները նշվում են «սարքի սահմանված հզորություն» եւ սարքի «սահմանված EԱԳ/ՕԳԳ» բաժնի յուրաքանչյուր վանդակում:							
** Եթե ընտրվում է դեֆոլտային Cd = 0,25, ցիկլային փորձաստուգումներ չեն պահանջվում: Հակառակ դեպքում պահանջվում է ջեռուցման կամ հովացման ցիկլային փորձաստուգման արժեք:							

Արտադրողը պետք է արտադրանքի տեխնիկական փաստաթղթերում ներկայացնի վերելում ներկայացված 1-ին աղյուսակում նշված տեղեկությունները, որքանով դա վերաբերելի է ֆունկցիոնալ հնարավորություններին: «Փուլային» նշանով հզորությունների կառավարմամբ սարքերի համար բարձրագույնի եւ ցածրագույնի երկու արժեքները՝ նշված «բ/ց»՝ բաժանված թեք գծով («/»), նշվում են որպես «սահմանված հզորություն» յուրաքանչյուր վանդակում:

դ) Միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների վերաբերյալ տեղեկություններին ներկայացվող պահանջներ:

Միախողովակ օդորակիչները փաթեթվածքի վրա, արտադրանքի վերաբերյալ փաստաթղթերում եւ ցանկացած՝ էլեկտրոնային կամ տպագիր գովազդային նյութում պետք է անվանվեն «տեղային օդորակիչներ»:

Արտադրողը ներկայացնում է ստորեւ ներկայացված աղյուսակում նկարագրված տեղեկությունները:

*Աղյուսակ 2*

**Տեղեկություններին ներկայացվող պահանջները**

<i>Տեղեկություններ՝ որոշելու համար այն մոդելը (մոդելները), որին առնչվում են տեղեկությունները [լրացնել ըստ անհրաժեշտության]</i>			
Նկարագրությունը	Պայմանանշանը	Արժեքը	Միավորը
Անվանական հզորություն հովացման համար	<i>P<sub>անվանական հովացման համար</sub></i>	x,x	կՎտ
Անվանական հզորություն ջեռուցման համար	<i>P<sub>անվանական ջեռուցման համար</sub></i>	x,x	կՎտ
Մուտքային անվանական հզորություն հովացման համար	<i>P<sub>էւզ</sub></i>	[x,x]	կՎտ
Մուտքային անվանական հզորություն ջեռուցման համար	<i>P<sub>օգգ</sub></i>	[x,x]	կՎտ
Էներգաարդյունավետության անվանական գործակից	<i>էԱԳս.</i>	[x,x]	—
Օգտակար գործողության անվանական գործակից	<i>ՕԳԳս.</i>	[x,x]	—
Էներգասպառում «ջերմապահպանիչից անջատված» ռեժիմում	<i>P<sub>ջւ</sub></i>	[x,x]	Վտ
Էներգասպառում «սպասման» ռեժիմում	<i>P<sub>սդ</sub></i>	[x,x]	Վտ
Միախողովակ (երկխողովակ) սարքվածքների էներգասպառումը (նշել՝ հովացման եւ ջեռուցման համար առանձին)	<i>ԵՐԿԽՈՂ.՝ Q<sub>ԵՐԿԽՈՂ.</sub> ՄԻՎԽՈՂ.՝ Q<sub>ՄԻՎԽՈՂ.</sub></i>	<i>Երկխող.՝ [x] Միախող.՝ [x,x]</i>	<i>Երկխող.՝ կՎտ/տ Միախող.՝ կՎտ/ժ</i>

Ձայնի հզորության մակարդակը	$L_{WA}$	[x]	դԲ(Ա)
Գլոբալ տաքացման ներուժ	ԳՏՆ	[x]	կգCO <sub>2</sub> հավ.
Կոնտակտային տվյալներ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը (անվանումը) և հասցեն:		

ե) Կենցաղային օդափոխիչներին ներկայացվող տեղեկատվական պահանջները:

Արտադրողը տրամադրում է ստորեւ ներկայացված աղյուսակում նկարագրված տեղեկությունները:

*Աղյուսակ 3*

**Տեղեկություններին ներկայացվող պահանջները**

Տեղեկություններ՝ որոշելու համար այն մոդելը (մոդելները), որին առնչվում են տեղեկությունները [լրացնել ըստ անհրաժեշտության]			
Նկարագրությունը	Պայմանանշանը	Արժեքը	Միավորը
Օդափոխիչի առավելագույն արագություն	$F$	[x,x]	մ <sup>3</sup> /ր
Օդափոխիչի մուտքային հզորություն	$P$	[x,x]	Վտ
Սպասարկման արժեքը	$UU$	[x,x]	(մ <sup>3</sup> /ր)/Վտ
Էներգասպառումը «սպասման» ռեժիմում	$P_{U\eta}$	[x,x]	Վտ
Օդափոխիչի ձայնի հզորության մակարդակը	$L_{WA}$	[x]	դԲ(A)
Օդի առավելագույն արագություն	$c$	[x,x]	մետր/վայրկ.
Սպասարկման արժեքի չափման ստանդարտ	[այստեղ նշե՛ք չափման օգտագործված ստանդարտի հղումը]		
Կոնտակտային տվյալներ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը (անվանումը) և հասցեն:		

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Չափումները եւ հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով իրականացվում են չափումներ եւ հաշվարկներ՝ օգտագործելով ներդաշնակեցված ստանդարտներ, որոնց հղումային համարները հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*, կամ այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի՝ գրեթե ստույգ արդյունքներ ապահովող մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող արդիական մեթոդների վրա: Դրանք պետք է բավարարեն հետեւյալ բոլոր տեխնիկական պարամետրերը:

2. Սեզոնային էներգասպառումը եւ էներգաարդյունավետության սեզոնային գործակիցը (ԷԱՍԳ) ու օգտակար գործողության սեզոնային գործակիցը (ՕԳՍԳ) որոշելիս պետք է հաշվի առնել հետեւյալը՝

- ա) հովացման եւ ջեռուցման եվրոպական սեզոնը (սեզոնները), ինչպես սահմանված է ստորեւ ներկայացված 1-ին աղյուսակում.
- բ) սկզբնական հաշվարկային պայմանները, ինչպես սահմանված է ստորեւ ներկայացված 3-րդ աղյուսակում.
- գ) Էլեկտրաէներգիայի սպառումը գործարկման բոլոր համապատասխան ռեժիմների համար՝ ժամանակահատվածների կիրառմամբ, ինչպես սահմանված է ստորեւ ներկայացված 4-րդ աղյուսակում.
- դ) էներգաարդյունավետության նվազման ազդեցությունը, որն առաջանում է գործարկումների/դադարների պատճառով (կիրառելի լինելու դեպքում)՝ կախված հովացման եւ (կամ) ջեռուցման հզորության կառավարման տիպից.

ե) օգտակար գործողության սեզոնային գործակիցների շտկումներ այն պայմանների դեպքում, երբ ջեռուցման հզորությամբ հնարավոր չէ ապահովել ջեռուցման բեռնվածքը.

զ) ջեռուցման ռեժիմում սարքի սեզոնային արդյունավետության հաշվարկում պահուստային տաքացուցչի նպաստող գործոնը (կիրառելի լինելու դեպքում):

3. Երբ ներսում եւ դրսում տեղադրվող սարքի (սարքերի) համակցում հանդիսացող որոշակի մոդելի վերաբերյալ տեղեկությունները ձեռք են բերվել նախագծի հիման վրա հաշվարկման եւ (կամ) այլ համակցումների արտարկման հիման վրա, փաստաթղթերը պետք է ընդգրկեն նման հաշվարկների եւ (կամ) արտարկումների եւ իրականացված հաշվարկների ճշգրտությունը հաստատող փորձաստուգումների մանրամասները (այդ թվում՝ նման համակցումների արդյունավետությունը հաշվարկող մաթեմատիկական մոդելի եւ այն չափումների մանրամասները, որոնք իրականացվել են այդ մոդելը ստուգելու համար):

4. Միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների համար էներգաարդյունավետության անվանական գործակիցը (EAC<sub>անվանական</sub>) եւ համապատասխան դեպքերում օգտակար գործողության գործակիցը (OAC<sub>անվանական</sub>) սահմանվում են ստանդարտ անվանական պայմաններում, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում:

5. Հովացման (եւ (կամ) ջեռուցման) համար էլեկտրականության սեզոնային սպառման հաշվարկի ժամանակ պետք է հաշվի առնվի գործարկման բոլոր համապատասխան ռեժիմներում էլեկտրական էներգիայի սպառումը, ինչպես սահմանված է ստորեւ ներկայացված 3-րդ աղյուսակում՝ օգտագործելով 4-րդ աղյուսակում սահմանված գործարկման ժամերը:

6. Կենցաղային օդափոխիչի արդյունավետությունը որոշվում է սարքի օդի հոսքի անվանական արագության հիման վրա՝ բաժանած սարքի անվանական մուտքային էլեկտրական հզորությամբ:

## Աղյուսակ 1

Հովացման եւ ջեռուցման սեզոնի բիներ (j՝ բինի ինդեքս, Tj՝ դրսի ջերմաստիճան, hj՝ տարեկան ժամերը յուրաքանչյուր բինի համար), որտեղ «չջ»-ն չոր ջերմաչափի ջերմաստիճանն է

ՀՈՎԱՑՄԱՆ ՍԵՋՈՆ			ՋԵՌՈՒՑՄԱՆ ՍԵՋՈՆ				
#	Tj °C չջ	hj ժ/տարի	j #	Tj °C չջ	hj ժ/տարի		
					Միջինը	Ավելի տաք	Ավելի սառը
1	17	205	1-ից 8	-30-ից - 23	0	0	0
2	18	227	9	- 22	0	0	1
3	19	225	10	- 21	0	0	6
4	20	225	11	- 20	0	0	13
5	21	216	12	- 19	0	0	17
6	22	215	13	- 18	0	0	19
7	23	218	14	- 17	0	0	26
8	24	197	15	- 16	0	0	39
9	25	178	16	- 15	0	0	41
10	26	158	17	- 14	0	0	35
11	27	137	18	- 13	0	0	52
12	28	109	19	- 12	0	0	37
13	29	88	20	- 11	0	0	41
14	30	63	21	- 10	1	0	43
15	31	39	22	- 9	25	0	54
16	32	31	23	- 8	23	0	90
17	33	24	24	- 7	24	0	125
18	34	17	25	- 6	27	0	169
19	35	13	26	- 5	68	0	195
20	36	9	27	- 4	91	0	278
21	37	4	28	- 3	89	0	306
22	38	3	29	- 2	165	0	454
23	39	1	30	- 1	173	0	385
24	40	0	31	0	240	0	490
			32	1	280	0	533



		33	2	320	3	380	
		34	3	357	22	228	
		35	4	356	63	261	
		36	5	303	63	279	
		37	6	330	175	229	
		38	7	326	162	269	
		39	8	348	259	233	
		40	9	335	360	230	
		41	10	315	428	243	
		42	11	215	430	191	
		43	12	169	503	146	
		44	13	151	444	150	
		45	14	105	384	97	
		46	15	74	294	61	
Ընդ. ժամերը		2 602		Ընդ. ժամերը	4 910	3 590	6 446

*Աղյուսակ 2*

**Ստանդարտ անվանական պայմաններ, ջերմաստիճանները**

**«չոր ջերմաչափում» օդի ջերմաստիճան**

(փակագծերում նշվում է «չոր ջերմաչափ»)

Սարքվածքը	Գործառույթը	Ներսի օդի ջերմաստիճանը (°C)	Դրսի օդի ջերմաստիճանը (°C)
օդորակիչներ՝ բացառությամբ միախողովակ օդորակիչների	հովացում	27 (19)	35 (24)
	ջեռուցում	20 (առավելագույնը 15)	7(6)
միախողովակ օդորակիչ	հովացում	35 (24)	35 (24)*
	ջեռուցում	20 (12)	20 (12)*

\* Միախողովակ օդորակիչների դեպքում հովացնելիս (ջեռուցելիս) կոնդենսատորի (գոլորշացուցիչի) մեջ մատակարարվում է ոչ թե դրսի, այլ ներսի օդ:

Աղյուսակ 3

**Սկզբնական հաշվարկային պայմաններ, ջերմաստիճանները**

**«չոր ջերմաչափում» օդի ջերմաստիճան**

(փակագծերում նշվում է «թաց ջերմաչափ»)

Ֆունկցիան/սեզոնը	Ներսի օդի ջերմաստիճանը (°C)	Դրսի օդի ջերմաստիճանը (°C)	Երկարժեք ջերմաստիճանը (°C)	Գործարկման սահմանային ջերմաստիճանը (°C)
	Մեր.	Ջհաշվարկ.հ./Պհաշվարկ.ջ.	Մերկ.	Տգ.ս.
հովացում	27 (19)	Ջհաշվարկ.հ. = 35 (24)	հասանելի չէ	հասանելի չէ
ջեռուցում /Միջին	20 (15)	Ջհաշվարկ.ջ. = - 10 (- 11)	առավելագույնը՝ 2	առավելագույնը՝ - 7
ջեռուցում/Ավելի տաք		Ջհաշվարկ.ջ. = 2 (1)	առավելագույնը՝ 7	առավելագույնը՝ 2
ջեռուցում/Ավելի սառը		Ջհաշվարկ.ջ. = - 22 (- 23)	առավելագույնը՝ - 7	առավելագույնը՝ - 15

Աղյուսակ 4

**Գործարկման ժամերն ըստ սարքվածքի տիպի՝ ըստ էլեկտրականության**

**սպառումը հաշվարկելու համար օգտագործվելիք գործառությանին ռեժիմի**

Սարքվածքի տեսակը / ֆունկցիոնալ հնարավորությունը (համապատասխան դեպքերում)	Միավորը	Ջեռուցման սեզոնը	Միացված ռեժիմ	Ջերմապահ պանիչից անջատված ռեժիմ	Սպասման ռեժիմ	Անջատված ռեժիմ	Կարտերային տաքացուցչի ռեժիմ
			հովացում՝ ժ <sub>ՀՀ</sub> ջեռուցում՝ ժ <sub>ՋՀ</sub>	ժ <sub>ՋԱ</sub>	ժ <sub>ՄՊ</sub>	ժ <sub>ԱՆՋԱՏՎԱԾ</sub>	ժ <sub>ԿԱՐՏ.</sub>

**Օդորակիչներ՝ բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների**

Հովացման ռեժիմ, եթե սարքն ունի միայն ժ/տարի հովացման ֆունկցիա			350	221	2 142	5 088	7 760
Հովացման եւ ջեռուցման ռեժիմներ, եթե սարքվածքն ունի այդ երկու ռեժիմների հնարավորությունը	Հովացման ռեժիմ	ժ/տարի	350	221	2 142	0	2 672
	Ջեռուցման ռեժիմ	ժ/տարի	Միջինը	1 400	179	0	0
Ավելի տաք			1 400	755	0	0	755

		Ավելի սառը	2 100	131	0	0	131
		հովացում՝ ժ<< ջեռուցում ժ>>		ԺՁԱ	ԺՄԳ	ԺԱՆՁԱՍՎԱԾ	ԺԿԱՐՏ
Ջեռուցման ռեժիմ, եթե սարքվածքն ունի միայն ջեռուցման գործառույթ	ժ/տարի	Միջինը	1 400	179	0	3 672	3 851
		Ավելի տաք	1 400	755	0	4 345	4 476
		Ավելի սառը	2 100	131	0	2 189	2 944

**Երկխողովակ օդորակիչ**

Հովացման ռեժիմ, եթե սարքն ունի միայն հովացման ֆունկցիա	ժ/60 ր		1	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ
Հովացման եւ ջեռուցման ռեժիմներ, եթե սարքվածքն ունի այդ երկու ռեժիմների հնարավորությւնը	Հովացման ռեժիմ	ժ/60 ր	1	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ
	Ջեռուցման ռեժիմ	ժ/60 ր	1	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ
Ջեռուցման ռեժիմ, եթե սարքն ունի միայն ջեռուցման ֆունկցիա	ժ/60 ր		1	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ

**Միախողովակ օդորակիչ**

Հովացման ռեժիմ	ժ/60 ր		1	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ
Ջեռուցման ռեժիմ	ժ/60 ր		1	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ	հասանելի չէ

**ՀԱՎԵԼՎԱԾ III**

**Շուկայի վերահսկողության նպատակներով  
իրականացվող ստուգման ընթացակարգը**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները I հավելվածով սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու համար կիրառում են ստուգման հետեւյալ ընթացակարգը:

1. Անդամ պետության մարմինները փորձարկում են մեկ առանձին սարք:
2. Օդորակիչի մոդելը, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, համարվում է համապատասխան դեպքերում սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե դրա էներգաարդյունավետության սեզոնային գործակիցը (ԷԱՍԳ) կամ օգտակար գործողության սեզոնային գործակիցը (ՕԳՍԳ) պակաս չէ, քան սարքի սահմանված հզորությունը՝ հանած 8 տոկոս: ԷԱՍԳ եւ ՕԳՍԳ արժեքները սահմանվում են 2-րդ հավելվածին համապատասխան:

Միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների մոդելը համարվում է համապատասխան դեպքերում սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե անջատված ռեժիմի եւ սպասման ռեժիմի պայմաններում արդյունքները չեն գերազանցում սահմանային արժեքներն ավելի քան 10 տոկոսով, եւ եթե համապատասխան դեպքերում էներգաարդյունավետության գործակիցը (ԷԱԳ<sub>անվանական</sub>) կամ օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ<sub>անվանական</sub>) պակաս չէ, քան սահմանված արժեքը՝ հանած 10 տոկոս: ԷԱԳ եւ ՕԳԳ արժեքները սահմանվում են II հավելվածին համապատասխան:

Օդորակիչի մոդելը համապատասխան դեպքերում համարվում է սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե ձայնի հզորության առավելագույն մակարդակը չի գերազանցում սահմանված արժեքն ավելի քան 2 դԲ(A)-ով:

3. Եթե 2-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա շուկայի վերահսկողության հարցերով մարմինը պատահականության սկզբունքով փորձարկման համար ընտրում է նույն մոդելի երեք լրացուցիչ սարք:
4. Օդորակիչի մոդելը, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, համարվում է համապատասխան դեպքերում սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե երեք սարքերի էներգաարդյունավետության սեզոնային գործակիցի (ԷԱՍԳ) կամ

օգտակար գործողության սեզոնային գործակցի (ՕԳՍԳ) միջին ցուցանիշը համապատասխան դեպքերում պակաս չէ, քան սահմանված արժեքը՝ հանած 8 տոկոս՝ սարքի սահմանված հզորության դեպքում: ԷԱՍԳ եւ ՕԳՍԳ արժեքները սահմանվում են II հավելվածին համապատասխան:

Միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների մոդելը համարվում է համապատասխան դեպքերում սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե երեք սարքերի արդյունքների միջին ցուցանիշն անջատված ռեժիմի եւ սպասման ռեժիմի պայմաններում չի գերազանցում սահմանային արժեքներն ավելի քան 10 տոկոսով, եւ եթե միջին էներգաարդյունավետության գործակիցը (ԷԱԳ<sub>անվանական</sub>) կամ օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ<sub>անվանական</sub>) պակաս չէ, քան սահմանված արժեքը՝ հանած 10 տոկոս: ԷԱԳ եւ ՕԳԳ արժեքները սահմանվում են II հավելվածի համաձայն:

Օդորակիչի մոդելը համարվում է համապատասխան դեպքերում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե ձայնի հզորության առավելագույն մակարդակը չի գերազանցում սահմանված արժեքն ավելի քան 2 դԲ(A)-ով:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը համարվում է սույն կանոնակարգին չհամապատասխանող:

Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով անդամ պետությունները կիրառում են II հավելվածում նշված ընթացակարգերը եւ այն ներդաշնակեցված ստանդարտները, որոնց հղումային համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում, կամ հաշվարկման եւ չափման այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող արդիական մեթոդների վրա:

---

**ՀԱՎԵԼՎԱԾ IV****Հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին օդորակիչներին առնչվող՝ շուկայում հասանելի լավագույն տեխնոլոգիան էներգաարդյունավետության առումով սահմանվել է հետեւյալը՝

**Օդորակիչների հենանիշերը**

Օդորակիչներ՝ բացառությամբ երկխողովակ եւ միախողովակ օդորակիչների		Երկխողովակ օդորակիչ		Միախողովակ օդորակիչ	
ԷԱՍԳ	ՕԳՍԳ	ԷԱԳ	ՕԳԳ	ԷԱԳ	ՕԳԳ
8,50	5,10	3,00*	3,15	3,15(*)	2,60

Օդորակիչում օգտագործվող սառնագրակի ԳՏՆ-ի մակարդակի հենանիշը հետեւյալն է՝  $\text{ԳՏՆ} \leq 20$  է: \* Գոլորշիացման եղանակով հովացմամբ միախողովակ օդորակիչների արդյունավետության հիման վրա: